

# ՆՊՐԱՆՈՐ

# 24 Էջ

գինը՝ 100 դրամ

XXI դԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



## ՄԾՅՈՒՈՂԱՆՆԵՐ ԵՐԵՆՈՊՈՐՏԻՉՆԵՐԸ

### «ԿՈՐՍՎԵ՛, ՉԵՍ ՈՒՉԵՐ ՈՐ ՆԿԱՐՍ ԲԱՇՎԻ...»

• ԹՈՒԼ ԲԱԼԻՆՅԱՆ

Վիլյամ Սարոյանը, որի ծննդյան 91-ամյակն է լրանում օրերս, իր կյանքի ընթացքում հաճախ է առնչվել կինոարվեստին: Սարոյանագետներին գրավել է «Սարոյանը եւ կինոն» թեման, որի վերջին օղակներից է հայազգի վաստակաշատ լուսանկարիչ Փոլ Քալինյանի Ամերիկայում նկարահանած «Վիլյամ Սարոյան. մարդը եւ գրողը» փաստագրական շարժապատկերը:

Խարբերոցի հոր եւ մարաշցի մոր զավակ Փոլ Քալինյանը (Պողոս Գալինյան) ծնվել է 1932-ին Բեյրութում: Նախնական կրթությունն ստացել է Դամասկոսում: 1961-ին Բեյրութում բացել է իր առաջին լուսանկարչական ստուդիան «Ֆոտո Փոլը»: 1964-ին տեղափոխվել է Կանադա՝ Մոնրեալ, ապա՝ Միացյալ Նահանգներ: 1967-ին ավարտել է Նյու Յորքի լուսանկարչության ինստիտուտը՝ լուսանկարչի եւ կինոարտադրիչի վկայականով:

Շուտով մշտական բնակություն է հաստատել Ֆրեզնոյում: Նախապես աշխատել է «Յուդ» լուսանկարչական ստուդիայում, 1973-ին բացել իր երկրորդ արհեստանոցը՝ «Փոլի լուսանկարչական ստուդիան»: Տարիների ընթացքում Քալինյանը լուսանկարել է բազմաթիվ հայտնի անձանց՝ կինոդերասաններ եւ քաղաքական գործիչներ, զինվորականներ եւ հոգեւորականներ, արվեստագետներ եւ այլք: Նրա գործերը հրատարակվել են երկու տասնյակից ավելի գրքերում, ինչպես նաեւ հեղինակալոր տարբեր լրագրերում, օրացույցներում, հանդեսներում, ալբոմներում, ֆիլմաբեռնական գրքերում:

Թեպետ Վիլյամ Սարոյանի հետ ապրում էր նույն քաղաքում, սակայն իր անվանի հայրենակցի հետ առաջին հանդիպմանը Քա-

լինյանը սպասել է ամբողջ տասներկու տարի: Ի վերջո, 1976-ի մարտին, ֆրեզնոյաբնակ քանդակագործ Վարազ Սամվելյանի միջնորդությամբ, հանդիպումը կայանում է, եւ Քալինյանը հայտնում է Սարոյանին լուսանկարելու իր փափագը: «Կորսվե՛, չեմ ուզեր նկարս քաշվի»,- լինում է առաջին արձագանքը: Այնուհետեւ նրանք զնում են Վարազի արվեստանոցը, որտեղ Սարոյանը

վեստ լուսանկարների մի շարք: Դրանցից մեկի հիման վրա 1991-ին ստեղծվել է դրոշմանիշ՝ որը խորհրդանշել է ԱՄՆ-ի եւ ԽՍՀՄ-ի միջեւ բարեկամությունը:

Սակայն Քալինյանը մեկ այլ նվիրական նպատակ էլ ուներ՝ ստեղծել կինոնկար Սարոյանի մասին: Նա անձանոք չէր կինոարվեստին. տակավին 1952-ին Բեյրութում նկարահանել էր հասարակական եւ ուղեգրական բնույթի մի շարք կարճամետրաժ շարժանկարներ (ցավոք, դրանք ոչնչացել են 1975-ին լիբանանյան պատերազմի ժամանակ):

Սարոյանի մահից հետո՝ 1981-ին, Քալինյանը պատրաստել է 10 րոպեանոց մի ժապավեն՝ «Ինչպես նկարեցի Սարոյանին» վերնագրով, որն ավելի քան 60 անգամ ցուցադրվել է ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում եւ սփռվել հեռուստատեսությամբ: Քաջալերված ընդունելությունից Քալինյանը խորամուխ է եղել Սարոյանի կյանքի եւ գործի ուսումնասիրության մեջ: Վեց տարի տեւած նրա պրպտումների հանրագու-



մարը կազմել է մեկ ժամանոց «Վիլյամ Սարոյան. մարդը եւ գրողը» վավերագրական կինոնկարը, որն ավարտել է 1991-ին: Այն անգլերեն է հայերեն մակագրերով, նկարահանված է գունավոր եւ սեւ-սպիտակ: Փոլ Քալինյանն այս կինոնկարի սցենարի հեղինակն է, բեմադրիչն ու արտադրիչը: Այս աշխատանքի ստեղծմանը մասնակցել են

հետզհետե ջերմանում է, Փոլի հետ արցունքոտ աչքերով երգում «Կիլիկիան», ապա ասում, «Քեզ հավնեցա, Փոլ, հիմա ուզածիդ չափ կրնաս նկարս քաշել»: Քալինյանը, որ արդեն իսկ գրույցի ընթացքում հասցրել էր մի քանի անգամ գաղտնի լուսանկարել Սարոյանին, շուտով դառնում է գրողի բարեկամը եւ ստեղծում Սարոյանի բարձրար-

նաեւ Քալինյանի կինը՝ Արաքսի Դովլեթյանը, որդին՝ Յրանտը, որպես գեղարվեստական խորհրդատու, եւ դուստրը՝ Սյուզին, որպես ֆիլմի փոխարտադրիչ:

Ֆիլմն ընդգրկում է դարասկզբից մինչեւ 1980-ականներն ընկած ժամանակահատվածը: Կինոնկարի սկզբում Սարոյանը վերհիշում է իր անցյալը, ապա ֆիլմի խոսնակը՝ ամերիկյան հեռատեսիլի եւ կինոյի անվանի դեմք, Սարոյանի մտերիմ բարեկամ, հայրորդի Մայք Քանըրզը (Գրիգոր Օհանյան) պատմում է Սարոյանի 60-ամյա գրական վաստակի մասին: Կինոնկարում տեղ են գտել Սարոյանի գրքերը, անգլերեն եւ հայերեն խոսքից հատվածներ, Սարգիս Մուրադյանի նկարները, Ֆրեզնո քաղաքն իր անցյալով եւ ներկայով, ընտանեկան լուսանկարներ, դրվագներ ֆիլմերից, հուշեր, պատառիկներ Սարոյանի հայաստանյան այցելություններից, հնչում է Փոլ Նազիկյանի երաժշտությունը:

«Վիլյամ Սարոյան. մարդը եւ գրողը» կինոնկարը ցայսօր արժանացել է վեց մրցանակի տարբեր կինոփառատոներում: 1994-ին Յուսեթոնի միջազգային կինոփառատոնում ներկայացված 57 վավերագրական ժապավեններից այս ֆիլմին է շնորհվել երրորդ մրցանակը: 1995-ի հուլիսին Ֆիլադելֆիայի 18-րդ միջազգային կինոփառատոնում այն արժանացել է ոսկե մրցանակի որպես լավագույն փաստագրական աշխատանք... 1991-ից ի վեր ֆիլմը ցուցադրվել է 14 երկրներում: Վերջին տվյալներով, այն արդեն դիտել են Ստամբուլում, իսկ Յայաստանում ֆիլմի ցուցադրությունը (չնայած Փոլ Քալինյանի ջանքերին), ինչպես միշտ, ուշանում է...

ԱՐԾՎԻ ԲԱԼԻՆՅԱՆ